ՀՀ ԿԳՄՍՆ

«Երևանի պետական տեխնոլոգիական քոլեջ» ՊՈԱԿ

Հաստատում եմ

ԵՊՏՔ Կառավարման խորհրդի

նախագահ Ա. Բարեղամյան

«16» 02 2024 թ.

(ստորագրություն)

ՍԿՍՆԱԿ ԴԱՍԱՎԱՆԴՈՂՆԵՐԻ ԽՐԱԽՈՒՍՄԱՆ ԵՎ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԱՌԱՋԸՆԹԱՑԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ

Դասավանդման որակի և մասնագիտական կարողությունների բարձր մակարդակը նաև կախված է սկսնակ դասավանդողների խրախուսման և աջակցման քաղաքականությունից: Սկզբնական շրջանում սկսնակ դասավանդողը պիտի համապատասխանի հետևյալ պահանջներին՝

1. լավ տիրապետի դասավանդող առարկայի բովանդակությանը,
2. տիրապետի համակարգչին,
3. ունենա հաղորդակցման հմտություններ:

Հետագայում սկսնակ դասախոսների մոտ կոմպետենցիաների ձևավորման հարցում մեծ նշանակություն ունի նրանց համագործակցությունը փորձառու դասախոսներրի հետ, ովքեր՝

1. կներկայացնեն աշխատանքի նկարագիրը,
2. կծանոթացնեն հիմնական և լրացուցիչ գրականությանը,
3. կծանոթացնեն ուսումնական մեթոդներին,
4. կփոխանցեն դասավանդման և մանկավարժական փորձը,
5. կօգնեն ճիշտ կազմակերպել պրակտիկ պարապմունքները,
6. կնպաստեն սկսնակ դասավանդողի ադապտացիային աշխատանքային կոլեկտիվում,
7. կնպաստեն պատասխանատվության, բարոյական սկզբունքների, կարգապահության, բարեխղճության ձևավորմանը,
8. կաջակցեն ինքնագնահատմանը և ինքնազարգացմանը,
9. կտրամադրեն խորհրդատվություն արդար գնահատման մեթոդների վերաբերյալ
10. կմասնակցեն դասալսումներին:

ԵՊՏՔ-ում առանձին ուշադրություն է հատկացվում դաստիարակչական աշխատանքային, մանկավարժական հմտությունների զարգացմանը, կոնֆլիկտների հաղթահարմանը, օտար լեզուների և համակարգչային կարողությունների զարգացմանը, նորարարական ուսումնամեթոդական գործընթացների ներդրմանը: